Ռեյնան կրկին փորձում է

Ջեյն Չոուտ
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Ռեյնան կրկին իր դպրոցում կարդաց թռուցիկի խոսքերը: *Ակնարկագիրների մրցույթ. շահեք անվճար ճանապարհորդություն դեպի Նյու Յորք:*

Դա մրցույթ էր շրջանի բազմաթիվ դպրոցների աշակերտների համար: Ռեյնան պատկերացրեց իրեն Նյու Յորքում՝ շուրջը բարձր երկնաքերեր, իսկ մոտակայքում՝ Ազատության արձանը: Նա ուզում էր գնալ:

«Դու պետք է մասնակցես»,- ասաց Սիդնին: «Դու լավագույնն ես մեր հասակակիցների շրջանում»:

Ռեյնան լավ զգաց իրեն, երբ լսեց Սիդնիի խոսքերը: Նա շատ բան չգիտեր ակնարկներ գրելու մասին: Բայց ցանկացավ փորձել:

Դասերից հետո Ռեյնան նստել էր իր նստարանին: *Թըփ, թըփ, թըփ*: Նա մատիտը թփթփացրեց թղթի վրա, մինչ մտածում էր իր գաղափարների մասին: Ի վերջո, նա սկսեց գրել:

Աշխատանքն ավարտելու համար Ռեյնայից պահանջվեց մի ամբողջ շաբաթ: Բայց մայրիկի որոշակի օգնությամբ նա վերջապես զգաց, որ պատրաստ է ներկայացնել իր ակնարկը:

Անցավ մի քանի շաբաթ: Ռեյնան անհամբեր սպասում էր, թե ով է հաղթելու: Միգուցե շուտով նա կմեկնի Նյու Յորք:

«Հարյուրից ավելի ուսանողներ մասնակցեցին»,- ասաց պարոն Ռայթը դասարանին: «Շնորհակալ եմ նրանց, ովքեր ակնարկ գրեցին»:

Ռեյնայի սիրտը հուզմունքից բաբախեց:

«Թեև մեր ուսանողներից որևէ մեկը չի հաղթել մրցույթում, Ռեյնան բոլոր հայտերի մեջ լավագույն հնգյակում էր: Շնորհավորում ենք, Ռեյնա»,- ասաց պարոն Ռայթը:

Ռեյնան ժպտաց, մինչ դասընկերները ծափահարում էին: Բայց ներքուստ նա չափազանց տխրեց: Լավագույն հնգյակում լինելը այնքան լավ չէր, որքան հաղթելը: Նյու Յորքը տեսնելու նրա երազանքը հօդս ցնդեց:

Երբ Ռեյնան վերադարձավ տուն, նա ընկավ խոհանոցում գտնվող աթոռին՝ իր ծնողների կողքին: «Ես պարտվեցի մրցույթում»,- ասաց նա: «Դա վերջին անգամն է, որ ես նորից ինչ-որ նոր բան կփորձեմ: Ես կանեմ միայն այն, ինչը գիտեմ, որ լավ է ստացվում ինձ մոտ»: Նա գլուխն առավ ձեռքերի մեջ:

«Ցավում եմ, որ չհաղթեցիր: Ես և մայրիկը հպարտ ենք քեզնով, որ փորձել ես»,- ասաց հայրիկը: Նա նստեց Ռեյնայի կողքին: «Հիշու՞մ ես, երբ ես մի քանի տարի առաջ գործազուրկ էի»:

Ռեյնան գլխով արեց:

«Ես դիմեցի շատ աշխատանքների համար, բայց դրանցից ոչ մեկում աշխատանքի չընդունվեցի»,- ասաց հայրիկը: «Ես շատ հուսահատված էի»:

Ռեյնան բարձրացրեց գլուխը: «Իսկապե՞ս»:

Հայրիկը գլխով արեց: «Բայց ես չհանձնվեցի: Երկար ժամանակ անց ես գտա ինձ համար կատարյալ մի աշխատանք: Բայց դա տեղի չէր ունենա, եթե ես դադարեի փորձել»:

Մայրիկը մխիթարելու համար ձեռքը դրեց Ռեյնայի մեջքին: «Գիտե՞ս, թե քանի պատմություն եմ ուղարկել տարբեր ամսագրերի»,- հարցրեց նա: «Իսկ գիտե՞ս, թե քանիսն են մերժվել: Բայց ես չեմ կարող հանձնվել, եթե ուզում եմ տեսնել իմ աշխատանքները տպագրված: Գրելը կարևոր է ինձ համար, ուստի, ես շարունակում եմ փորձել»:

Ռեյնան միշտ մտածել էր, որ իր ծնողների մոտ շատ լավ է ստացվում այն ամենը, ինչ անում են: Նա երբեք չի իմացել, որ նրանց նույնպես մերժել են:

Նա դեռ տխուր էր, բայց հիմարություն էր թվում այլևս *երբեք* որևէ նոր բան չփորձելը: Դա այն չէր, ինչ Երկնային Հայրն էր ցանկանում նրա համար: Ռեյնան որոշեց, որ չի հանձնվի: Նա կարող էր ավելի շատ բաներ փորձել, նույնիսկ այն, ինչը նրա մոտ սկզբում լավ չէր ստացվում:

«Կարծում եմ, որ հաջորդ տարի նորից կմասնակցեմ մրցույթին»,- ասաց Ռեյնան: Մրցույթում պարտվելը չպետք է լինի նրա երազանքների վերջը:

ԱՐԻՓ. ՇԱՐԵՄՈՎԱ

Ռեյնան գնաց իր գրասեղանի մոտ և վերցրեց մատիտը: Գրելը բավականին զվարճալի էր: *Թըփ, թըփ, թըփ*: Այսպիսով, ի՞նչ նոր բան կարող է նա գրել հաջորդը: ●

«Տերը սիրում է ջանքը, որովհետև ջանքը բերում է վարձքեր, որոնք չեն կարող գալ առանց դրա»:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, մեջբերված է Ջոյ Դ. Ջոնսի «Մի հատուկ վեհ կոչում» ելույթում, *Լիահոնա*, մայիս 2020, 16: